ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.08.2015թ.
257-ի 2

ՀՀ ոստիկանության պետ
պարոն Վլադիմիր Գասպարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գասպարյանին,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ միջոցներով (բյուջետային, արտաբյուջետային կամ այլ) են գնվել լրագրողական տեխնիկայի սարքավորումները, որոնք որպես փոխհատուցում տրվել են Ազատություն ռադիոկայանի՝ 2015թ.-ի հունիսի 23-ի ժամանակ Բաղրամյան պողոտայում տուժած լրագրողներին,
2. Հարուցված ո՞ր քրեական կամ վարչական կամ կարգապահական վարույթի շրջանակներում է որոշում կայացվել գնել այդ լրագրողական տեխնիկան եւ տալ լրագրողներին, խնդրում ենք տրամադրել այդ որոշման (որոշումների) պատճեն,
3. Որքա՞ն գումար է ծախսվել փոխհատուցման նպատակով լրագրողական տեխնիկայի սարքավորումներ գնելու համար:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան